

# ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2014

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

### ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևարղում: Պատասխանների ճևարղի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

I. Տրված են 7, 19, 35, 39, 42 թվերը:

1

Տրված թվերից քանի՞սն է պարզ թիվ:

- 1) 2
- 2) 1
- 3) 5
- 4) 3

2

Տրված թվերից քանի՞սն են 7-ի բազմապատիկ:

- 1) 0
- 2) 2
- 3) 1
- 4) 3

3

Առաջին թիվը երրորդ թվի ո՞ր տոկոսն է:

- 1) 25
- 2) 0,2
- 3) 20
- 4) 40

4

Տրված երկնիշ թվերից ո՞րն ունի ավելի շատ բաժանարար:

- 1) 35
- 2) 19
- 3) 39
- 4) 42

**II. ԳԱՄԵԼ արտահայտության արժեքը.**

**5**  $2\frac{2}{5} - 1\frac{1}{4} :$

1) 1,5

2)  $1\frac{3}{20}$

3)  $\frac{11}{20}$

4)  $\frac{13}{20}$

**6**  $(\sqrt{20} + \sqrt{80}) : \sqrt{5} :$

1) 8

2) 20

3) 6

4)  $\sqrt{20}$

**7**  $\sin 30^\circ + \cos 60^\circ :$

1) 1

2)  $\frac{1+\sqrt{3}}{2}$

3)  $\sqrt{2}$

4)  $\sqrt{3}$

**8**  $5^{1+\log_{\sqrt{5}} 7} :$

1) 405

2) 70

3) 64

4) 245

### III. Կատարել առաջադրանքները.

9

Նշված միջակայքերից որի՞ն է պատկանում  $\frac{5x+1}{3} = \frac{5x-11}{2}$  հավասարման  
արմատը.

- 1)  $[8; 10]$
- 2)  $(2; 5)$
- 3)  $[5; 7)$
- 4)  $[7; 8]$

10

Գտնել  $|x-5|=7$  հավասարման արմատների գումարը:

- 1) 14
- 2) 10
- 3) 12
- 4) 13

11

Գտնել  $\sqrt{0,4-1,2x}=2$  հավասարման արմատը:

- 1) 2
- 2) -4
- 3) -3
- 4) 0

12

Գտնել  $2^{x^2-7x+3}=1$  հավասարման արմատների արտադրյալը:

- 1) 3
- 2) 0
- 3) 7
- 4) 2

**IV. Լուծել անհավասարումը.**

13  $3(x-4) > -x :$

- 1)  $(3; +\infty)$
- 2)  $(-\infty; -3)$
- 3)  $[-3; 0)$
- 4)  $[0; 3]$

14  $3^{x+2} \cdot 3^{x-2} > 1 :$

- 1)  $\emptyset$
- 2)  $(0; +\infty)$
- 3)  $(-2; 0]$
- 4)  $(-\infty; -2)$

15  $\log_3(x-3) > 2 :$

- 1)  $(-\infty; 1)$
- 2)  $\emptyset$
- 3)  $(12; +\infty)$
- 4)  $[1; 12]$

16  $|2x-3| < 5 :$

- 1)  $(-\infty; 4)$
- 2)  $(-1; 4)$
- 3)  $(-\infty; -1) \cup (4; +\infty)$
- 4)  $(-5; 5)$

**V. Կատարել առաջադրանքները.**

**17** Գտնել  $(a_n)$  թվաբանական պրոգրեսիայի առաջին անդամը, եթե  $4a_3 - a_9 = 18$ :

- 1) 18
- 2) 3
- 3) 6
- 4) 9

**18** Գտնել 8-ի բազմապատիկ բոլոր երկնիշ թվերի գումարը:

- 1) 560
- 2) 624
- 3) 616
- 4) 600

**19** Գտնել  $(b_n)$  երկրաչափական պրոցրեսիայի այն անդամի համարը, որը հավասար է 54-ի, եթե  $b_1 = 2$ ,  $q = 3$ :

- 1) 5
- 2) 2
- 3) 3
- 4) 4

**20** Գտնել  $x$ -ը, եթե  $\frac{x}{3} + 1, 2x + 2, 9x + 3$  հաջորդականությունը երկրաչափական պրոցրեսիա է:

- 1) 6
- 2) 1
- 3) 3
- 4) 4

VI. Գնացքը  $A$ -ից  $B$  600 կմ ճանապարհն ըստ չվացուցակի պետք է անցներ 10 ժամում:  
Ծարժումն սկսելուց 4 ժամ հետո գնացքը  $C$  կայարանում հարկադրաբար 1 ժամ  
կանգնեց, որից հետո ավելացնելով նախատեսված արագությունը՝ ժամանակին  
հասավ  $B$  կայարան:

21 Քանի՞ կմ/ժ է գնացքի արագությունն ըստ չվացուցակի:

- 1) 80
- 2) 50
- 3) 60
- 4) 70

22 Քանի՞ կմ է  $AC$  հեռավորությունը:

- 1) 320
- 2) 200
- 3) 240
- 4) 280

23 Գնացքը  $CB$  ճանապարհահատվածը քանի՞ կմ/ժ արագությամբ անցավ:

- 1) 72
- 2) 75
- 3) 64
- 4) 68

24 Ինչքա՞ն ժամանակ ծախսեց գնացքն  $AB$  ճանապարհի առաջին կեսն անցնելու  
համար:

- 1) 5ժ
- 2) 4ժ 50ր
- 3) 5ժ 45ր
- 4) 5ժ 50ր

VII. Տրված է  $f(x) = -\frac{x^3}{3} + \frac{x^2}{2} + 12x + 24 \ln 2$  ֆունկցիան:

25 Գտնել  $f$  ֆունկցիայի կրիտիկական կետերը:

- 1)  $\emptyset$
- 2)  $-3$  և  $4$
- 3)  $-4$  և  $3$
- 4)  $0$  և  $1$

26 Գտնել  $f$  ֆունկցիայի աճման միջակայքերը:

- 1)  $(-\infty; -3] \cup [4; +\infty)$
- 2)  $[0; 1]$
- 3)  $[-4; 3]$
- 4)  $[-3; 4]$

27 Գտնել  $f$  ֆունկցիայի մաքսիմումի կետը:

- 1)  $1$
- 2)  $-3$
- 3)  $4$
- 4)  $3$

28 Գտնել  $f$  ֆունկցիայի գրաֆիկի այն կետերի արագիսները, որոնցում գրաֆիկին տարված շղափողը արագիսների առանցքի հետ կազմում է  $135^\circ$  անկյուն:

- 1)  $\frac{-1 \pm 3\sqrt{5}}{2}$
- 2)  $\frac{1 \pm 3\sqrt{5}}{2}$
- 3)  $\frac{-1 \pm \sqrt{53}}{2}$
- 4)  $\frac{1 \pm \sqrt{53}}{2}$

VIII. Տրված են  $A(-1;3)$ ,  $B(3;1)$  և  $O(0; 0)$  կետերը:

29 Գտնել  $\overrightarrow{BA}$  վեկտորի կոորդինատները:

- 1)  $\{2; 2\}$
- 2)  $\{-4; 2\}$
- 3)  $\{4; -2\}$
- 4)  $\{-2; 2\}$

30 Գտնել  $AB$  հատվածի միջնակետի կոորդինատները:

- 1)  $(1; 4)$
- 2)  $(1; 2)$
- 3)  $(2; 2)$
- 4)  $(1; 1)$

31 Գտնել  $\overrightarrow{AB}$  վեկտորի երկարությունը:

- 1) 2
- 2) 5
- 3)  $2\sqrt{3}$
- 4)  $2\sqrt{5}$

32 Գտնել  $\overrightarrow{AO}$  և  $\overrightarrow{OB}$  վեկտորների կազմած անկյան աստիճանային չափը:

- 1)  $60^0$
- 2)  $30^0$
- 3)  $90^0$
- 4)  $45^0$

**IX. Ուղղանկյունանիստի հիմքի կողմերը 6սմ և 8սմ են, իսկ կողմնային կողը՝ 10սմ:**

**33** Գտնել ուղղանկյունանիստի լրիվ մակերեսույթի մակերեսը:

- 1)  $376 \text{ սմ}^2$
- 2)  $120 \text{ սմ}^2$
- 3)  $200 \text{ սմ}^2$
- 4)  $140 \text{ սմ}^2$

**34** Գտնել ուղղանկյունանիստի ծավալը:

- 1)  $35\text{սմ}^3$
- 2)  $48 \text{ սմ}^3$
- 3)  $140 \text{ սմ}^3$
- 4)  $480 \text{ սմ}^3$

**35** Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծային հատույթի մակերեսը:

- 1)  $80 \text{ սմ}^2$
- 2)  $100 \text{ սմ}^2$
- 3)  $16\sqrt{34} \text{ սմ}^2$
- 4)  $3\sqrt{41} \text{ սմ}^2$

**36** Գտնել ուղղանկյունանիստի անկյունագծի և հիմքի հարթության կազմած անկյան աստիճանային չափը:

- 1) 120
- 2) 60
- 3) 45
- 4) 30

X. Տրված է  $\sqrt{(x-\sqrt{26})(30-x)} \left( \sin \frac{\pi x}{4} - \cos \frac{\pi x}{4} \right) = 0$  հավասարումը:

37 Քանի՞ ամբողջ թիվ է պարունակում հավասարման թվերը:

38 Ω՞րն է հավասարման ամենափոքր ամբողջ արմատը:

39 Ω՞րն է հավասարման ամենամեծ արմատը:

40 Քանի՞ արմատ ունի հավասարումը:

XI.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան  $A$  անկյան կիսորդը  $BC$  էջը հատում է  $D$  կետում:  $D$  կետով տարված է  $AC$ -ին զուգահեռ ուղիղ, որն  $AB$  ներքնաձիգը հատում է  $E$  կետում: Հայտնի է, որ  $AE = 15$ ,  $CD = 12$ :

41 Գտնել  $DE$  հատվածի երկարությունը:

42 Գտնել  $BD$  հատվածի երկարությունը:

43 Գտնել  $ADE$  եռանկյան մակերեսը:

44 Գտնել  $ABC$  եռանկյանն արտագծած և ներգծած շրջանագծերի կենտրոնների հեռավորության քառակուսին:

XII. Տրված է  $f(x) = |x^2 + 6x + 5|$  ֆունկցիան:

45

Շի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1.  $[-4; -3]$  միջակայքում ֆունկցիան աճող է:
2.  $2\pi$ -ն  $F(x) = \sin(f(x))$  ֆունկցիայի պարբերություն է:
3.  $f$  ֆունկցիայի գրաֆիկն  $y = 4$  ուղղի հետ ունի հատման երեք կետ:
4.  $F(x) = f(x+3)$  ֆունկցիան զույգ է:
5.  $f$  ֆունկցիայի գրաֆիկն արսցիսների առանցքը հատում է չորս կետում:
6.  $f(x) = \sin x$  հավասարումը  $(-\pi; \pi)$  միջակայքում արմատ չունի:

## Բ մակարդակ

XIII. Տրված է  $f(x) = \log_7 \sqrt{49 - x^2} + \frac{1}{1+|x|}$  ֆունկցիան:

46 Գտնել  $f$  ֆունկցիայի որոշման տիրույթին չպատկանող ամենափոքր բնական թիվը:

47 Գտնել  $f$  ֆունկցիայի մեծագույն արժեքը:

48 Գտնել  $f$  ֆունկցիայի նվազման միջակայքին պատկանող ամբողջ թվերի միջին թվաբանականը:

49 Գտնել այն  $k$  ամբողջ թվերի քանակը, որոնց դեպքում  $f(k) \geq f(1)$ :

**XIV. Դասարանում աշակերտների 40 % -ը գերազանցիկ են, ընդ որում տղաների 25 %-ն են գերազանցիկ, իսկ աղջիկների՝ 50 %-ը:**

**50**

Աղջիկների քանակը տղաների քանակից քանի՞ տոկոսով է ավելի:

**51**

Գերազանցիկ աղջիկների քանակը քանի՞ անգամ է շատ գերազանցիկ տղաների քանակից:

**52**

Դասարանի աշակերտների ո՞ր տոկոսն են կազմում տղաները:

**53**

Ամենաքիչը քանի՞ աշակերտ կարող է ունենալ այդպիսի դասարանը:

XV.  $ABCD$  քառանկյունը ներգծված է  $O$  կենտրոնով շրջանագծին:  $OA$  շառավիղն ուղղահայաց է,  $OB$  շառավիղին, իսկ  $OC$  շառավիղը՝  $OD$  շառավիղին:  $C$  կետից  $AD$  ուղղին տարված ուղղահայացի երկարությունը 9 է:  $BC$  հատվածի երկարությունը 2 անգամ փոքր է  $AD$  հատվածի երկարությունից:

54

Գտնել քառանկյան  $A$  և  $B$  անկյունների գումարի աստիճանային չափը:

55

Գտնել  $BC$ -ի երկարությունը:

56

Գտնել  $ABCD$  քառանկյան մակերեսը:

57

Գտնել շրջանագծի շառավիղի երկարության քառակուսին:

**XVI. Գտնել արտահայտության արժեքը.**

**58**  $(2\sqrt[4]{7} + 5) \left( \frac{2\sqrt{7} + 5\sqrt[4]{7}}{4\sqrt{7} + 20\sqrt[4]{7} + 25} - \frac{\sqrt[4]{7} - 2}{2\sqrt[4]{7} + 5} \right) :$

**59**  $\frac{2 \arccos(-1)}{\operatorname{arctg} 4 + \operatorname{arcctg} 4}$

**60**  $3^{\log_{3\sqrt{5}} 3} \cdot 5^{\log_{45} 135} :$

**61**  $32 \cos 9^\circ \cdot \cos 81^\circ \cdot \sin 54^\circ :$

## XVII. Կատարել առաջադրանքները.

62

Քանի՞ եղանակով կարելի է ջոկի 7 զինվորներին բաժանել երեք խմբի այնպես, որ մի խմբում լինի 3, իսկ մյուս խմբերում՝ 2-ական զինվոր:

63

Գտնել այն բոլոր “բառերի” քանակը, որոնք բաղկացած են 3 հատ Ի և 4 հատ Գ տառերից:

XVIII.  $O$  կետից տարված են  $OA, OM, ON$  ճառագայթներն այնպես, որ  $\angle MON = 90^\circ$ ,  $\angle AON = \angle AOM = 60^\circ$ :  $A$  կետից  $MON$  անկյան կիսորդին տարված է ուղղահայաց հարթություն, որը  $OM$  և  $ON$  ճառագայթները հատում է համապատասխանաբար  $C$  և  $B$  կետերում:

64 Շի՞շտ են արդյոք հետևյալ պնդումները:

1.  $BOC$  եռանկյունը հավասարասրուն է:
2.  $AOB$  եռանկյունը հավասար է  $AOC$  եռանկյանը:
3.  $AK$ -ն ուղղահայաց է  $OB$ -ին, որտեղ  $K$ -ն  $OB$  հատվածի միջնակետն է:
4.  $OABC$  քուրզին արտագծած գնդային մակերեսույթի կենտրոնը  $AH$  հատվածի միջնակետն է, որտեղ  $H$ -ը  $BC$  հատվածի միջնակետն է
5.  $BC$  ուղիղն ուղղահայաց է  $OA$  ուղիղն:
6.  $OA, OB$  և  $OC$  հատվածների երկարություններն իրար հավասար են:

**XIX. Տրված է՝  $a$  պարամետրով  $(x+a)^2(\sqrt{x}-a-2) \leq 0$  անհավասարությունը:**

65

**Ճիշտ են արդյոք հետևյալ պնդումները:**

1.  $a = -2$  դեպքում անհավասարությունը ունի ճիշտ երկու լուծում:
2.  $a > -2$  գանկացած դրական արժեքի դեպքում անհավասարությունը ունի առնվազն չորս քնական լուծում:
3.  $a < -2$  դեպքում անհավասարությունը լուծում չունի:
4.  $a > 1$  դեպքում անհավասարությունը ունի առնվազն տասը ամբողջ լուծում:
5. Եթե  $a \in (-0,5; \sqrt{3} - 2)$ , ապա անհավասարությունը ունի ճիշտ երկու ամբողջ լուծում:
6. Եթե  $a \in (-2; -1)$ , ապա անհավասարման լուծումների քակմությունը  $\left[0; (a+2)^2\right]$  միջակայքն է: